ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ 07/119

(ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական համակարգչային համակարգի
օգտագործման իրավունքի տրամադրման և սպասարկման մասին)

ք.Երևան « 29 » մայիսի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Աշոտ Աբովյանի, այսուհետ՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ, մի կողմից և Իրավական Տեղեկատվական Կենտրոն ՓԲԸ-ն, որը գործում է ընկերության կանոնադրության համաձայն, ի դեմս տնօրեն Ռոբերտ Ավագյանի, այսուհետ՝ ԿԵՆՏՐՈՆ, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսդրության դրույթները կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. ԿԵՆՏՐՈՆԸ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ է տրամադրում իր տնօրինության տակ գտնվող և հեղինակային իրավունքով պաշտպանվող ԻՐՏԵԿ Իրավական Տեղեկատվական համակարգչային համակարգի (այսուհետ՝ համակարգ) օգտագործման ոչ բացառիկ իրավունքը, իսկ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ վճարում է սույն պայմանագրով համակարգի ներդրումների քանակին համապատասխան սահմանված վճարը:

1.2. ԿԵՆՏՐՈՆԸ և համակարգի հեղինակները պահպանում են համակարգի նկատմամբ ունեցած իրենց բոլոր իրավունքները:

1.3. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ իրավունք է տրվում համակարգը ներդնել և օգտագործել միայն ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ պատկանող՝ սույն պայմանագրի 3.1. կետով սահմանված համակարգի ներդրումների քանակին համապատասխան համակարգիչում (համակարգիչներում):

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ԿԵՆՏՐՈՆԸ պարտավորվում է՝

ա) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ կողմից սույն պայմանագրով համակարգի օգտագործման իրավունքի տրամադրման համար սահմանված վճարը ԿԵՆՏՐՈՆԻՆ վճարելուց (փոխանցելուց) հետո երեք օրվա ընթացքում համակարգը ներդնել ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված համակարգի ներդրումների քանակին համապատասխան համակարգիչում (համակարգիչներում)

բ) կատարել համակարգի իրավական բազայում կատարված փոփոխությունների և լրացումների մուտքագրումը (այսուհետ՝ սպասարկում) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ համակարգիչում (համակարգիչներում) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ կողմից հերթական սպասարկման համար 4.2 կետով սահմանված վճարը ԿԵՆՏՐՈՆԻՆ վճարելուց (փոխանցելուց) հետո երեք օրվա ընթացքում:

գ) չհրապարակել, սույն պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու հետևանքով իրեն հայտնի դարձած՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները.

դ) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ դիմելու օրվանից երեք օրվա ընթացքում վերականգնել ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ համակարգիչում (համակարգիչներում) ներդրված համակարգը, եթե դրանք փչացել կամ վնասվել են ներդրված համակարգի աշխատանքի կամ դրա սպասարկման հետևանքով.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Վճարման օր համարվում է ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ կողմից վճարվելիք գումարը ԿԵՆՏՐՈՆԻ հաշվարկային հաշվին փոխանցվելու կամ նրա դրամարկղ մուծելու օրը:

2.2. ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ պարտավորվում է՝

ա) պայմանագիրը կնքելուց հետո տասը օրվա ընթացքում ԿԵՆՏՐՈՆԻ հաշվարկային հաշվին փոխանցել կամ նրա դրամարկղը մուծել սույն պայմանագրով համակարգի ներդրումների քանակին համապատասխան սահմանված վճարը.

բ) սպասարկման համար սույն պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հինգ օր առաջ ԿԵՆՏՐՈՆԻ հաշվարկային հաշվին փոխանցել կամ նրա դրամարկղը մուծել համակարգի սպասարկման համար սույն պայմանագրով սահմանված վճարը.

գ) համակարգը ներդնել և օգտագործել միայն նրանում տեղակայված ՕԳՆՈՒԹՅԱՆ և համակարգի ուղեցույցի հրահանգների համաձայն.

դ) տեղեկատվություն ստանալու նպատակով չիրականացնել և թույլ չտալ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին՝ այսուհետ՝ անձանց

- ուսումնասիրել կամ հետազոտել համակարգի հիմքում ընկած գաղափարները ու սկզբունքները.
- իրականացնել համակարգի ազատ ապաբանաքաղում (դեկոմպիլացիա)՝ կոդն ընդօրինակելու, նոր ձևի թարգմանելու կամ այլ նպատակների համար.
- համակարգը գրանցել (ներդնել, արտագրել) սույն պայմանագրով չնախատեսված այլ համակարգիչներում
- կատարել որևէ փոփոխություն համակարգի ծրագրային ապահովման մեջ.

ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
(«ԻՐՏԵԿ») ՓԲԸ

Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ

ե) համակարգը չօգտագործել համակարգչային ցանցում և թույլ չտալ, որ համակարգչային ցանցին միացած մյուս աբոնենտները օգտվեն համակարգից, եթե համակարգիչը, որի վրա ներդրվել է համակարգը, միացված է համակարգչային ցանցին.

զ) առանց ԿԵՆՏՐՈՆԻ համաձայնության չիրականացնել համակարգում ընդգրկված, ինչպես նաև դրա հետագա սպասարկման միջոցով մուտքագրված նոր ընդունված, փոփոխված ու լրացված իրավական ակտերի տեքստերի բազմացում՝ հրատարակում և այլն, կամ տեղադրում Ինտերնետ կայքերում:

3. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

3.1. Համակարգը ներդրվում է ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ միայն 18 (տասնութ) համակարգիչներում (համակարգի ներդրումների քանակը):

3.2. Համակարգի սպասարկումը կատարվելու է ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ մոտ համակարգը ներդնելուց հետո երկու ամիսը մեկ անգամ:

3.3. ԿԵՆՏՐՈՆԻ մատուցած Ծառայության արդյունքը ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմ ստորագրելու և կնքելու պահից:

4. ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Պայմանագրի ընդհանուր գինը 2007 թվականի համար կազմում է 576000 (հինգ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ:

4.2. Համակարգի մեկ օրինակի օգտագործման իրավունքի տրամադրման գինը՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմում է 21000 (քսանմեկ հազար) դրամ: Համակարգի 18 օրինակների օգտագործման իրավունքի տրամադրման գինը՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմում է 378000 (երեք հարյուր յոթանասունութ հազար) դրամ:

4.3. Ներդրված համակարգի առաջին օրինակի յուրաքանչյուր սպասարկման գինը՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմում է 15000 (տասնհինգ հազար) դրամ: Ներդրված համակարգի երկրորդից տասնութերորդ օրինակներից յուրաքանչյուր օրինակի յուրաքանչյուր սպասարկման գինը՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմում է 3000 (երեք հազար) դրամ:

Ներդրված համակարգի երկրորդից տասնութերորդ օրինակներից յուրաքանչյուր օրինակի յուրաքանչյուր սպասարկման գինը՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմում է 66000 (վաթսունվեց հազար) դրամ՝ ընդամենը 2007 թվականին կատարվելիք երեք սպասարկումների համար՝ 198000 (հարյուր իննսունութ հազար) դրամ՝ ԱԱՀ-ն ներառյալ:

4.4. Պայմանագրի գինը իր մեջ ներառում է Կատարողի կողմից կատարվելիք բոլոր ծախսերը, ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

4.5. Յուրաքանչյուր օրացուցային տարվա սկզբում՝ մինչև տվյալ տարվա առաջին սպասարկումը, սպասարկման գինը ենթակա է վերանայման: Եթե կողմերը սպասարկման գնի վերաբերյալ համաձայնության չեն գալիս, ապա այդ դեպքում պայմանագիրը սպասարկման մասով համարվում է լուծված:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Եթե սույն պայմանագիրն ստորագրած մի կողմի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարումը, նյութական վնաս է պատճառել մյուս կողմին, ապա մեղավոր կողմը պարտավոր է փոխհատուցել մյուս կողմի կրած վնասները: ԿԵՆՏՐՈՆԸ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նյութական պատասխանատվություն է կրում իր կողմից ներդրված համակարգի աշխատանքի հետևանքով ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ համակարգիչին (համակարգիչներին) կամ նրանում (նրանցում) ընդգրկված ծրագրերի վնասման համար միայն՝ սույն պայմանագրի համակարգի ներդրման համար 4.1. կետով սահմանված գումարի սահմաններում:

5.3. ԿԵՆՏՐՈՆԸ որևէ պատասխանատվություն չի կրում, եթե ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ կողմից սույն պայմանագրի պայմանների խախտման հետևանքով փչանա (ոչնչանա) ներդրված համակարգը կամ վնասվի ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ համակարգիչը (համակարգիչները) ու նրանում ընդգրկված այլ ծրագրերը:

5.4. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ համակարգիչում (համակարգիչներում) ներդրված համակարգի ու սպասարկման միջոցով մուտքագրված փոփոխությունների ու լրացումների պատահական կորստի ռիսկն ընկնում է ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ վրա:

5.5. Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, դատարանի, միջնորդ դատարանի կողմից:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2007 թվականի դեկտեմբերի 31-ը:

6.2. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո եթե Կողմերից որևէ մեկը չի լուծում պայմանագիրը, ապա Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված ևս մեկ տարով՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ մոտ բյուջետային ֆինանսավորման առկայության դեպքում:

6.3. Սույն պայմանագիրն ամբողջությամբ կարող է վաղակետ լուծվել՝

ա) կողմերի համաձայնությամբ.

բ) ԿԵՆՏՐՈՆԻ կողմից միակողմանի, եթե՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ չի կատարում սույն պայմանագրի 2.2 կետում նշված պարտավորությունները:

գ) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ կողմից, եթե ԿԵՆՏՐՈՆԸ սույն պայմանագրով սահմանված ժամկետն անցնելուց հետո տասը օրվա ընթացքում չի ներդնում համակարգը.

դ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

6.4. Սույն պայմանագիրը միայն սպասարկման մասով կարող է վաղակետ լուծվել կողմերից որևէ մեկի կողմից: Այդ դեպքում պայմանագիրը լուծող կողմը պարտավոր է պայմանագիրը լուծելուց տասը օր առաջ գրավոր տեղեկացնել այդ մասին մյուս կողմին:

6.5. ԿԵՆՏՐՈՆԻ կողմից համակարգը ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ համակարգիչում (համակարգիչներում) ներդնելուց հետո սույն պայմանագրի վաղակետ լուծման դեպքում պայմանագրի 2.2 կետի գ), դ), ե), զ) ենթակետերով սահմանված նորմերը շարունակում են գործել պայմանագրի վաղակետ լուծման օրվանից սկսած երկու տարի ժամկետով, եթե կողմերի գրավոր համաձայնությամբ այլ բան չի սահմանվի:

7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Կողմերի համար սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները և իրավունքները պայմանագիրն ստորագրած կողմերից մեկը չի կարող փոխանցել այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, առանց պայմանագիրն ստորագրած մյուս կողմի գրավոր համաձայնության:

7.2. ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ իրավունք ունի՝

ա) համակարգն օգտագործել իր նպատակների համար.

բ) արխիվային նպատակների համար, ինչպես նաև համակարգչային ծրագրի օրինակի կորստյան, ոչ պիտանի լինելու դեպքերի համար կատարել համակարգի, ինչպես նաև դրա սպասարկման միջոցով մուտքագրված փոփոխությունների ու լրացումների պահեստային օրինակի նախնական պատճենահանում.

գ) պահանջել ԿԵՆՏՐՈՆԻՑ վերացնել համակարգում, ինչպես նաև ակտերի տեքստերում տեղ գտած սխալներն ու անճշտությունները:

7.3. Սույն պայմանագրի դրույթները տարածվում են ինչպես ԿԵՆՏՐՈՆԻ կողմից ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ բոլոր համակարգիչներում ներդրված համակարգերի, այնպես էլ համակարգերում հետագայում սպասարկման կարգով կատարված փոփոխությունների ու լրացումների վրա:

7.4. Պայմանագիրը կնքված է երկու հավասարազոր օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

Կողմերի իրավաբանական հասցեներն են՝

ԿԵՆՏՐՈՆ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ («ԻՐՏԵԿ») ՓԲԸ	Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ
հասցե՝ ք.Երևան, Աբովյան 36	հասցե՝ ք. Երևան, Վ.Սարգսյան 6
հեռ. 527950 E-mail: info@irtek.am	հեռ. 581908
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, կոդ 20500 հ/հ 205002200991	Թիվ 1 գանձապետական բաժանմունք, հ/հ 900011192011
ՀՎՀՀ 01517279	ՀՎՀՀ 02583241
տնօրեն	ղեկավարի պաշտոնակատար
Ռ.Ավագյան _____	Ա. Աբովյան _____
Կ.Տ.	Կ.Տ.